

## ՌՈՒՍԱՀԱՅԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆԸ

(Նոր Նախիջևանի տարիներ)

Վ. Բ. ԲԱՐԵՍՈՒԴԱՐՅԱՆ

Հայ ժողովրդի XVIII—XIX դարերի մշակույթի և հասարակական-քաղաքական պատմության մեջ ուրույն տեղ է զբաղում Կովկասի Իսխաղոններում հաստատված Նոր Նախիջևանի զաղութը<sup>1</sup>։ Դոնի ափերին հանգրվանած հայ զանգվածը իր ինքնուրույն կյանքի մեկուկես հարյուրամյակի ընթացքում տնտեսական առաջադիմության հետ մեկտեղ ստեղծել է բավական ինքնատիպ, շատ ուշագրավ ու բազմերանգ մշակույթ։

Սույն հոդվածում լուսարանվելու է հայ ժողովրդի XVIII դարի վերջերի մշակույթի կարևոր էջերից ու Նոր Նախիջևանի պատմության նշանակալի կողմերից մեկը՝ հալոյարյանի կամ ուսահայ առաջին տպարանի նոր-նախիջևանյան տարիների գործունեությունը։

Հենց սկզբից պետք է նշել, որ ինչպես հայկական տպարանի, այնպես էլ XVIII դարի վերջին տասնամյակի Նոր Նախիջևանի (և ոչ միայն Նոր Նախիջևանի) զաղութի կուլտուր-կրթական բովանդակ կյանքը կապվում է հայ ազատագրական շարժման ու մշակույթի երախտավոր, ոուսահայերի հոգևոր առաջնորդ Հովսեփ Արղուիսյանի անվան հետ։

Ինչպես հայտնի է, Հ. Արղուիսյանի ջանքերով Նալդարյանի տպարանը Պետերբուրգից տեղափոխվեց Նոր Նախիջևանի մոտակայքում գտնվող Ս. Խաչ վանքը, որը հիմնադրման ժամանակվանից դարձավ տեղի հայության և առհասարակ հայկական մշակույթի օջախներից մեկը և որպես այդպիսին գոյատևեց մինչև XIX դարի վերջերը։

Կապածից վեր է, որ Ս. Խաչ վանքը կառուցվելուց դեռևս բավական առաջ ոուսահայ թեմի առաջնորդը մտադրություն է ունեցել այն դարձնել զիտական, հրատարակչական ու կրթական մի կենտրոն, որտեղից կարելի լիներ զբոսն ուղարկել և կրթված հայ էրիտասարդների միջոցով զրագիտություն ու լուսավորություն տարածել Ռուսաստանում և այլուր ցրված հայ զանգվածների մեջ։

Տակավին զաղութի հիմնադրմանը չձեռնարկած և ղրիմահայ զանգվածին չհանդիպած, Պետերբուրգից Հ. Արղուիսյանը զգուշացնում էր քաղաքը և գյուղերը հիմնելիս եկեղեցիների և մասնավորապես վանքի համար ընդարձակ տեղ հատկացնելու մասին՝ այնտեղ դպրոց, տպարան և

<sup>1</sup> Նոր Նախիջևանը հիմնադրվել է Եկատերինա II կայսրուհու 1779 թ. նոյեմբերի 14-ի հրովարտակի հիման վրա Ղրիմի հայաբնակ վայրերից ոուսական կայսրության կազմակերպած զաղթի հետևանքով։ 1778 թ. ամռանը զաղթի ուղին բռնած ղրիմահայ զանգվածը երկար թափառումներից հետո ի վերջո կանգ է առնում Դոնի գետափնյա հարթավայրում և Դմիտրի Թոստովսկու ամրոցից (այժմ Դոնի Թոստով) չորս կմ հեռավորության վրա հիմնում Նոր Նախիջևան քաղաքը, իսկ նրա մերձակայքում հինգ հայկական գյուղեր՝ Զալթր, Թոփտի, Մեծ Սալա, Սուլթան Սալա և Նևսվիտա։

Կայսերական շնորհագրով ղրիմահայերն ուտացյան տնտեսական մի շարք առանձնաշնորհումներ, ինչպես նաև ազգային օրենքներով ու ավանդական սովորություններով առաջնորդվելու և, հանձին հայկական մագիստրատի, ներքին կառավարչություն ունենալու իրավունք։

Հատկանշական է, որ XVIII դարի վերջերին, ազատագրական շարժման վերելքի և Հայաստանի անկախությունը վերականգնելու պատրանքների շրջանում Նոր Նախիջևանը, անխառն բնակչություն ունեցող ինքնավար այդ զաղութը, ազգային պետականությունը վերականգնելու հույսեր էր ներշնչում հայ առաջավոր մտածողներին։ Նվ բնավ պատահական չէ, որ ազատագրական շարժման ավանգարդում ընթացող հնդկահայերը մեծ գումարի նվիրաբերություններ են անում նորահաստատ զաղութում հրատարակչական, ուսումնական և լուսավորական զանազան ձեռնարկումներ կատարելու նպատակով։

հարակից այլ շինություններ կառուցելու նպատակով: «Արդ պատվիրեմ սիրելեացդ իմոց,— գրում էր նա 1780 թ. ապրիլին,— եթէ մինչև մեր այդր դալն քաղաքի ձերոյ տեղն րաժանելոյ լինին ժ եկեղեցւոյ և մէկ վանքի տեղն լինիցի մերձ դեղոցն. այնքան մեծ լինիցի, որ սա րավականաց-նի դպրատանն, տպագրատանն (ընդգծումը մերն է — Վ. Բ.), միարանից խցերի, բաղի և այլ հարկաւորութեանց տեղ ունիցի. որոց մէջն կառուցեալ լինի եկեղեցին և շուրջ ղնովաւ վերահի-շեալքն րստ իւրաքանչիւրոց պատշաճաւոր տեղւոյ. որ լինիցի բերկրութիւն քաղաքի ձերոյ և յա-ւիտենական պարծանք ընդհանուր ազգին և Աթոռոյն մերոյ»<sup>2</sup>:

1782 թ. հունվարին ռուսահայ վիճակավորը, ոմն պարոն Ալեքսանի տեղեկացնելով նոր քա-ղաքի ու նրա եկեղեցիների հիմքերը ղենելու մասին, ավելացնում էր, թե այնտեղ տպարան է հաստատելու<sup>3</sup>:

Նույն տարվա մայիս ամսին դրած նամակում խոսելով Գրիգոր Խալիլարյանի տպարանի թե-րությունների մասին, Արղությանը պարզորոշ հայտնում էր նրա տպարանը նոր նախիջևան տե-ղափոխելու իր մտադրությունը: «Եւ թարց հրամանի,— գրում էր նա,— ոչ է հնար ումեք զտպա-րան հաստատել, ուստի դրով մերով խնդրեալ եմ ի կառավարիչ սենաթէն: Յորժամ հրաման տա-ցեն, յայնժամ զամենայն ժողովեալ ի նախիջևան պարտի գալ և անդ հաստատեալ, որ յոյժ յար-մար է սա ամենայն դիմաց, զի մերձ է Պոլսոյ»<sup>4</sup>:

Գրիգոր Խալիլարյանը իր տպարանն սկզբնապես հիմնել էր Լոնդոնում, սակայն արտասահ-մանում այն շատ կարճ կյանք էր ունեցել: Հայ լուսավորչական եկեղեցու մասին մեկ գիրք («Դա-ւանութիւն եկեղեցւոյ Հայաստանեայց») տպագրելուց հետո Խալիլարյանը տպարանը տեղափոխել էր Պետերբուրգ<sup>5</sup>: Այդ ժամանակվանից Հ. Արղությանը սերտ կապ է հաստատում Գ. Խալիլար-յանի հետ և իրեն հատուկ եռանդով աջակցում տպարանի գործունեությանը<sup>6</sup>: Նա ոչ միայն օժան-դակում էր թերի տառերն ու պատկերները լրացնելու, ծախսերը հոգալու գործում, այլև ձեռք էր բերում հրատարակության անհրաժեշտ գրքեր, համապատասխան խմբագրման ենթարկում և առա-քում Պետերբուրգ: Միաժամանակ տպագրված գրքերը իր գործակիցների միջոցով տարածում էր Ռուսաստանի և դրսի հայաշատ վայրերում և ստացված գումարը ուղարկում Խալիլարյանին՝ տը-պարանի պետքերին գործադրելու: Ուրիշ խոսքով, ռուսահայ առաջին տպարանի գործունեության սկզբնական շրջանում՝ 1781—1785 թթ. Հ. Արղությանն Աստրախանից, նոր նախիջևանից ամեն կերպ օգնում ու ապահովում էր տպարանի անխափան աշխատանքը: Սակայն իր թեմի հիմնական օջախներից հեռու գտնվելու հանգամանքը լուրջ դժվարություններ էր ստեղծում ինչպես տպարանը տեխնիկապես բարվոք վիճակում պահելու, այնպես էլ հրատարակության համար աշխատություն-ներ պատրաստելու, դրանք տպագրելու և լույս տեսած գրքերը իրացնելու գործում: Ահա թե ինչու տպարանի բեղմնավոր աշխատանքը ապահովելու համար Արղությանը 1785 թ. սկսած ամեն կերպ ջանում էր համոզել Խալիլարյանին՝ տեղափոխվել նոր նախիջևան կամ Աստրախան:

1785 թ. փետրվարին Խալիլարյանին ուղղած նամակում Արղությանը տեղեկացնում էր տպա-րանի համար մի քանի ձեռագրեր առաքելու մասին և տպա ավելացնում. «Ախ, եթէ ինձ մերձ լինէիր, շատ ինչ յառաջանալոց էր և վասն անմահ էր մնալոց տպագրատունդ այդ: Բայց զի՛նչ արարից, որ հեռի էս բաղէս յինչն, նմանապէս և ի բազմութենէ... Հայցեմ այնպէս հոգա և կար-գաւորեալ վասն տպարանիդ, որ զկնի մահու քոյ և մեր մի խափանեցի, այլ յաւիտեան յիշատակ մնացէ անուն քոյ... որ ջանքդ իզուր չլինիցի: Ոհ, թէ մօտանայիր ինձ աստ կամ ի նախիջևան»<sup>7</sup>:

Նույն տարվա ապրիլին գրած նպատակում ռուսահայ վիճակավորը վերստին տպարանատիրոջը համոզելու փորձ էր անում: «Եթէ իցէ կարելի քեզ ինքնին միայնակ գալ,— գրում էր նա,— ի Հաշտարխան և ի նախիջևան, տեսանել, ուր էիրտդ հանգչիցի և հաւանիցի: Ապա գործքդ և տունդ

2 Հայկական ՍՍՀ կենտրոնական պետական պատմական արխիվ, ֆ. 54, դ- 2509, թ. 2:

3 Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 4496, թ. 46:

4 Նույն տեղում, թ. 346: Հայտնի է, որ մինչև Գրիգոր Խալիլարյանի տպարանը նոր նախի-ջևանի Ս. Խաչ վանք տեղափոխելու մտահղացումը Հ. Արղությանը տարիներ շարունակ րանակ-ցում էր Ղուկաս կաթողիկոսի և Ամստերդամի հայերի հետ տեղի հայկական տպարանը ձեռք բե-րելու նպատակով, որը, սակայն, չի հաջողվում (տե՛ս 'Իվան Հայոց պատմության, գիրք Քիֆլիս, 1911, էջ 487):

5 Տե՛ս Ե. Շ ա հ ա զ ի զ, Նոր նախիջևանի Ս. Խաչ վանքը, Քիֆլիս, 1901, էջ 47—48:

6 Խալիլարյանի տպարանի պետերբուրգյան տարիների մասին տե՛ս К. Н. Григоровъ я н, Армянская культурная колония в Петербурге в XVIII веке (ՀՍՍՀ ԴԱ «Տեղեկագիր», հաս. դիտ., 1953, № 9, էջ 60—67):

7 Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 4496, թ. 275:

բերես անդ՝ Ապա նշում է, որ տպարանին համապատասխան վարպետներ կտան, որ տպարանը կլինի հասարակությանը, իսկ ինքը հալղարյանը՝ նրա կառավարիչը և տպագրությունը կհարատևի թե՛ անդ դպրատուն շինեցից, մէկ կարգուցող վարպետ բերից ի Պօլսոյ, զոր արդէն պատրաստեալ ունիմ՝ տիրայու Գէորգ ոմն, ու մեր տիրացու ազնիւ պարոն Ստեփան դիտէ, Կացուցիդ զնա վարժապետ և սրբագրիչ, վարձ նորին ես տա, յինէն և կամ ի հասարակութենէն: Զտպարան լինելոց է յանուն քոյ յաւիտեան, դու լինելոց ես կառավարիչ միայն, իսկ այլք աշխատողք՝ ի շարեւն, ի ցրուելն և ի տպելն: Եթէ այդպէս արասցես քեզ նեղութիւն չէ լինելոց և ոչ խափանումն տպագրատանդ ի յաւիտեան: Նամակը ավարտվում էր առարկության տեղիք չտվող հետևյալ տողերով. Եի նախիջևան յոյժ պատշաճ է տպագրատանդ, քանզի Ստամպօլու և Անատօլու մերձ է. ուր ես եմ, միանգամայն և դու պարտիս լինել:»

Տեսնելով Պետերբուրգից տեղափոխվելու հարցում հալղարյանի անվճարականությունն ու տատանումները, Արղությանը 1786 թ. նոյեմբերին նամակով դիմում է նրա կնոջը՝ Կատարինե Զաքարովնային, պատճառաբանում տպարանը նոր նախիջևան տեղափոխելու նպատակահարմարությունը և խնդրում ազդել ամուսնու վրա այդ խոհմ քայլին դիմելու համար<sup>10</sup>.

Հարավային Ռուսաստանի գաղթօջախներում տպագրություն ստեղծելու ուղղությամբ Արղությանի ծավալած եռանդուն գործունեության ժամանակ՝ 1787 թ. օգոստոսին մահանում է Գ. հալղարյանը<sup>11</sup>, թողնելով տպարանը պարտքերի մեջ: Արղությանը Թադեոս վարդապետ Մարությանին ուղարկում է Պետերբուրգ՝ տպարանի թերություններին ու պակասություններին վերահասու լինելու, հրատարակչական աշխատանքները անմիջականորեն չլիսավորելու և նրա զնման հարցերով զբաղվելու<sup>12</sup>: Ինքը մի քանի տարի, մինչև 80-ական թթ. վերջերը, բոլոր հնարավորությունները գործադրում է տպարանը պարտքերից ազատելու և այն զնելու դրամական միջոցներ հայթայթելու համար: Միաժամանակ հուսադրում է Թ. Մարությանին, հայտնելով՝ թե տպարանը զնելու հարցում ինքը կանգ չի առնի ոչ մի միջոցի առջև և եթե անհրաժեշտություն զգացվի՝ պատրաստ է անգամ մուրալու: «Սակա տպարանի առման և մեր լինելոյն,— գրում էր Արղությանը,— լեր աներկբայ, զի որպէս և քեզ խոսք եմ տուեալ, եթէ յումեքէ օգնութիւն ևս ոչ գտանէի այժմ, երկաթ ի պարանոցս ձգեալ մուրալոց էի վասն նորա, ուր մնաց, որ ազնիվ ժողովուրդն իմ յայդր և աստ օգնել ձեռնտու լինել խոստանան»<sup>13</sup>:

Ստեփանոս քահանա Հարությունյանին դեռևս 1786 թ. նա հատուկ լիազորություններով ուղարկում է Հեղկաստան<sup>14</sup>, ինչպես Հ. Արղությանը բազմիցս նշում էր, ինքը մեծ հույսեր էր կապում Շահամիր Շահամիրյանի և այլ հարուստ հեղկահայերի օգնության հետ:

Տպարանի համար որոշ գումար ձեռք բերելու նպատակով ռուսահայերի հոգևոր առաջնորդը դիմում է նաև իր թեմի գաղթօջախների բնակչությանը: Նախ մեկնում է Աստրախան, ուր ժողովրդի տարբեր խավերը, Արղությանի խոսքերով ասած. «...մեծ օգնութիւն արարին ինքնայօժար կամեցողութեամբ հաստատ տրօք, նախ ազնուածին իշխանքն և ապա օրհնեալ ժողովրդականքն»<sup>15</sup>, Ապա զնում է Ղզլար, նոր նախիջևան, որտեղի հայ զանգվածները թեև գտնվում էին բավական ծանր պայմաններում, սակայն ըստ կարելիւնի որոշ դրամազուխ են նվիրաբերում: «...Ողորմելի ժողովուրդքս տեղւոյս,— գրում է ռուսահայ վիճակավորը,— թեպետև մեծ, անտանելի նեղութիւն ունին ի փօստօյէ և ի անձրևէ և ցրտէ, ապա ըստ կարողութեան իւրեանց օգնութիւն արարին. շէն մնասցեն»<sup>16</sup>: Այսուհանդերձ Արղությանը դրանից հետո մեկնում է նաև Սարֆա՝ Հովհաննես լազարյանի օգնությանը դիմելու, քանի որ առանց նրա օժանդակության տպարանը զնելու գործը

8 Նույն տեղում, թ. 257:

9 Նույն տեղում:

10 Նույն տեղում, ձեռ. № 2949, թ. 57—59:

11 «Պարոն Գրիգոր հալղարեան Զուգայեցի հանգեալ առ Քրիստոս յամի տեառն 1787 թ. օգոստոսի ութն», ասված է հանգուցյալի տպարանում հրատարակված Եղիշեի Վարդանանց պատերազմ գրքի հիշատակարանում: (Տե՛ս «Գիրք որ կոչի Եղիշէ պատմագիրք...», 1787, ՍՊԲ, էջ 413):

12 «Դիվան Հայոց պատմության», գիրք Թ, էջ 14: Հմմտ. ՀՍՍՀ Մատենադարան, ձեռ. № 2949, թ. 121:

13 Մատենադարան, ձեռ. № 2949, թ. 167:

14 Նույն տեղում, թ. 144, 174:

15 Գիրք որ կոչի ընդհանրական ներսես Շնորհալույն, 1788, ՍՊԲ, էջ 334:

16 Մատենադարան, ձեռ. № 2949, թ. 229:

գլուխ չէր գա<sup>17</sup>։ Հովհաննես Լազարյանից բացի, նկատելի օգնություն են ցույց տալիս նաև հայ հարուստներ, եղբայրներ Մարգար և Փիլիպոս Մարգարյանները։ Այդ ամենի շնորհիվ նա կարողանում է բավական դրամագլուխ ձեռք բերել և իր ձեռնարկման հաջողությանը լիահույս, Թադևոս փարդապետին հայտնել, թե տպարանի համար հարկավոր գումարից 3000 ո. ժողովել է, 4000 ո. Շ. Լազարյանն է տալիս պարտքով, իսկ 3000 ո. էլ կմարեն աստիճանաբար։ Միաժամանակ պատվիրում է ուշադիր լինել, որ տպարանը չփչանա և սարքին վիճակում տեղափոխվի<sup>18</sup>։

Արդությանին զարմացնում էր նաև Կատարինե Զաքարովնայի արտասովոր վերաբերմունքը։ 1788 թ. օգոստոսին տպարանատիրոջ ալրիին ուղղած նամակում նա հիշեցնում էր Նոր Նախիջևան տեղափոխվելու հարցում Կ. Զաքարովնայի ցանկությունների մասին հանգուցյալ հալղարյանի քաղմիցս կրկնած խոսքերը և ապա հանդիմանում նրան երկմտանքի և հապաղումների համար<sup>19</sup>։

Արդությանին մտահոգում էր նաև իրեն հասած այն տեղեկությունը, ըստ որի Հովակիմ Լազարյանը ցանկություն էր հայտնել տպարանը գնել և Թադևոս փարդապետի հետ տեղափոխել Մոսկվա<sup>20</sup>։

Տպարանի համար միջոցներ հայթայթելու դժվարությունները, ինչպես նաև նրա տեղափոխության հետ կապված անհարմարությունները մեծ հոգս էին պատճառում ուսահայերի վիճակավորին։ Նույն տարվա նոյեմբերին նա դառնացած գրում էր Փիլիպոս Մանուչարյանին. «Ի պատճառս այդմ տպարանի իմ կեանքս մաշեցաւ և մաշեալ լինելոց»<sup>21</sup>։

Երկյուղ կրելով տեղի հոգևոր առաջնորդների տգիտությունից ու կարճատեսությունից և ցանկանալով իր մահից հետո էլ տպարանի անխափան ու հարատև գոյության երաշխիք ունենալ, Արդությանը պաշտոնապես տպարանը դնում է հայկական մագիստրատի տնօրինության տակ ու համարում Նոր Նախիջևանի գաղութի սփականությունը։ 1789 թ. հուլիսի 5-ին Կատարինե Զաքարովնային հասցեագրած նամակում նա ջանում էր մնացած պարտքերի հարցում փարատել տիկնոջ կասկածները, հայտնելով, որ, եթե անգամ ինքը մահանա, միևնույն է, այդ դոմարը կվճարի Նոր Նախիջևանի մագիստրատը։ Միաժամանակ Արդությանը խնդրում էր Հովհաննես Լազարյանին՝ համոզել Կ. Զաքարովնային, որպեսզի վերջինս պարտամուրհակները ստանալուց հետո թույլատրեր Թադևոս փարդապետին տպարանը տեղափոխել<sup>22</sup>։

Փոքր անց, նույն տարվա կեսերին, տպարանի հարցն արդեն վերջնականապես լուծվում է. Թադևոս փարդապետը այն գնում և 1790 թ. հունվար ամսին բերում հասցնում է Մոսկվա։ Այդ ամսին Շ. Արդությանը Հնդկաստան առաքած պատվիրակին գրում էր. «Ահա արդեն՝ զտպարանն առի. թէպէտ ՌԲԺ (1200) թուման, սակայն նստաւ ի վերսյ մեր ՌԲ (2000) թուման, Յայսմանէ պարտք մնաց ի վերայ մեր ԸԺԺ (810) թուման, որ Թադևոս փարդապետն մեր թեմեսուկ է տուեալ, երաշխավորութեամբ Ազնիւ Աղա Յովհաննէսին Նղիազարեան. և գրով մաղիստրաթին, որ յամ յամէ՝ վերադրօքն հատուցանեմ Կատարինէ Զաքարովնին, կնոջն հալղար Գրիգորի. և տպարանն առեալ այժմ, եկեալ ի Մոսկով, գալ ի Նախիջևան»<sup>23</sup>։

Շ. Արդությանը խորհուրդ է տալիս Թ. Մարությանին գարունը բացվելուն և գետերը նավարկելի դառնալուն պես տպարանը գետով բերել մինչև Մակուրիա։ Այնտեղից, Նոր Նախիջևանի վաճառականների օրինակով, նույնպես գետային երթուղով իջնել մինչև Դուրովկա։ Դուրովկայի և Դոն գետի միջև ընկած 60 վերստ ցամաքային տարածությունը սայլով տեղափոխել և ապա Դոն գետով հասցնել Նոր Նախիջևան<sup>24</sup>։ Միաժամանակ առաջարկում էր Պետերբուրգից կամ Մոսկվայից բերել տպագրիչ և կազմարար, որպեսզի համապատասխան վարձով տեղում աշակերտներին սովորեցնեն տպագրական գործը<sup>25</sup>։

Այսպիսով, 1789 թ. Պետերբուրգից դուրս բերած տպարանը մինչև 1790 թ. հունվարի վերջերը, ինչպես պարզվեց Շ. Արդությանի սրագրություններից, դեռևս գտնվում էր Մոսկվայում<sup>26</sup>։ Նույն տարում Արդությանը ավարտում է Ս. հալ վանքում տպարանի ու դպրոցի կարիքների հա-

17 Նույն տեղում, թ. 2։

18 Նույն տեղում, թ. 142։

19 Նույն տեղում, թ. 151։

20 Նույն տեղում, թ. 189։

21 Նույն տեղում, թ. 169։

22 Նույն տեղում, թ. 262։

23 «Դիվան Հայոց պատմության», դիրք Թ, էջ 101։

24 Մատենադարան, ձեռ. № 2949, թ. 233—234։

25 Նույն տեղում։

26 «Դիվան Հայոց պատմության», դիրք Թ, էջ 101։

մար կառուցվող 37 սենյակների շինությունը (շնորհիվ հնդկահայերի օգնության) և տպարանը բերում ու հաստատել է տալիս այնտեղ<sup>27</sup>, Արդեն 1790 թ. հունիսին Ս. Խաչում տպագրվում է չափածո մի ձևի տպարանը հիմնելու մասին<sup>28</sup>, իսկ մինչև տարվա վերջը՝ մի քանի գրքեր:

Նոր նախիջևանի տպարանի հարցում պատմական գրականության մեջ թույլ է տրվել ակնհայտ մի անճշտություն: Նույնպես ի պատմության մասնագետներ Ն. Մուրզակևիչը, Կ. Զելենեցկին և Վ. Կոչերգինը տպագրական գործի սկզբնավորման մասին խոսելով նշում են, որ հարավային Ռուսաստանի առաջին տպարանը Կրեմենչուկի կամ Դուբասար քաղաքի տպարանն է եղել, որտեղ 1791 և 1792 թ. հրատարակվել են առաջին գրքերը: Երկրորդ տպարանը հնդկականները համարում են Ս. Խաչի տպարանը, ուր, ըստ նրանց, իբր թև միայն 1792—93 թթ. է սկսվում գրքերի տպագրումը<sup>29</sup>,

Ինչպես նշվեց, նոր նախիջևանի տպարանն սկսել է գործել և առաջին աշխատությունները հրատարակել է ոչ թե 1792 թ., այլ Կրեմենչուկի տպարանից մեկ տարի առաջ, 1790 թ.: Հետևաբար Նույնպես ի առաջին տպարանը իրավամբ պետք է համարել ոչ թե Կրեմենչուկի կամ Դուբասարի, այլ նոր նախիջևանի Ս. Խաչ վանքի տպարանը<sup>30</sup>,

Խաղարկանի կամ, ինչպես հաճախ անվանվում էր, Արդուիյանի տպարանի ամենաբեղուն և արգասավոր ժամանակաշրջանը նոր նախիջևանյան տարիներն էին (1790—1795 թթ.): Այդ առումով լիովին իրավացի էր Արդուիյանը, երբ ժամանակին խաղարկանին համոզում էր տպարանը տեղափոխել նոր նախիջևան: Ուսումնասիրողները, այդ թվում նաև Դոնի հայկական գաղութի պատմությանը քաջատեղյակ Ե. Շահագիրը, նշում է, թե նոր նախիջևանի Ս. Խաչ վանքի տպարանում վեց տարվա ընթացքում տպագրվել է ընդամենը տասներկու անուն գիրք<sup>31</sup>: Շահագիրի աշխատությունը վկայակոչելով, նույնն են պնդում նաև Մ. Նալբանդյանի երկերի ժողովածուի հրատարակիչները<sup>32</sup>, Իրականում Ս. Խաչում տպագրված աշխատությունների թիվը հասնում է քսանի<sup>33</sup>:

27 Մատենադարան, ձեռ. № 2949, Թ. 392:

28 Նույն տեղում, կաթ. դիվան, Թ. 6. վավ. 141:

29 Տե՛ս Н. Мурзакевич, Начало книгопечатания в Новороссийском крае (Записки одесского общества истории и древностей, т. I, 1848, Одесса, էջ 213—217): К. Зеленецкий, Начало книгопечатания в Новороссийском крае (ЗООИД), т. II, 1848, էջ 215—216: В. А. Кочергин, Наброски по истории города Дубасари и прилежащего Поднепровья (Херсонской губернии), Одесса, 1911, էջ 83:

30 Պատմական այդ իրողությունը արդարացիորեն նշել էր Խ. Փորթընյանը, սակայն «Դոն» ամսագրի խմբագրությունը կրճատել էր հոգվածի այդ պարբերությունները: Տե՛ս Х. Поркшенин, Типография в Нахичеване («Дон», 1965, № 7, էջ 188—189):

31 Տե՛ս Ե. Շահագիրը, նոր նախիջևանի Ս. Խաչ վանք, էջ 47:

32 Տե՛ս Երկերի լիակատար ժողովածու, հատ. 1, Երևան, 1940, էջ 533:

33 Նոր նախիջևանի տպարանում հրատարակված գրքերի թվի և ժամանակի հարցում եղած թյուրիմացությունները փարատելու նպատակով մեջ ենք բերում այդ գրքերի ցուցակը ըստ հրատարակության տարիների.

#### 1790 թ.

ա. Ա. Զուղայեցի, Գրքոյկ որ կոչի Աղօթամատոյց,

բ. Սաղմոս Դաւթի. ի յօգուտ եւ ի դիւրութիւն դեովարժից մանկանց,

գ. Ստեփանոս Սիւնեցի, Բան բարառնական ոգեալ դիմառնարար՝ ի դիմաց Վաղարշապատու կաթուղիկէին էջմիածնի.

#### 1791 թ.

դ. Ժամակարգութիւն հասարակաց Աղօթից (ժամագիրք),

ե. Կարճառօտ ժամագիրք,

զ. Սաղմոս Դաւթի որ կոչի Սաղմոսարան.

#### 1792 թ.

է. Ղազար Զահեցի, Գիրք աղօթից որ կոչի Աստուածադերս,

ը. Հովհաննէս Երզնկացի, Վիպասանութիւն գերկնային մարմնոյ շարժմանէ (այս գիրքը նույն տարում ունենում է նաև երկրորդ հրատարակությունը),

թ. Տետրակ համառոտ անուանեալ դաւուն ողորմութեան,

ժ. Տարեցոյց և օրացոյց.

Ս. Խաչի տպարանի անխափան աշխատանքն ապահովելու և առհասարակ մշակութային ու լուսավորական գործունեության ասպարեզում Հ. Արզուիթյանին աջակցում ու սատար է կանգնում մտավորական գործիչների մի ամբողջ խումբ։ Այդ առաջավոր մտավորականների մեջ հարկ է նշել ջուղայեցի վաճառական Գրիգոր Խալիպարյանի անունը, որը առանձնահատուկ ձգտում ունեւր դեպի լուսավորությունը։ Նրա այդ սերը շմնաց հայեցողական երազանքների ոլորտում, ինչպես շատերի մոտ, այլ ոուսահայ առաջին տպարանի հիմնադրումով գործնական մարմնավորում ստացավ։ Առևտրական գործերով զտնվելով լոնդոնում, նա գնեց ու պակասը լրացնելով կազմակերպեց հայկական տպարան, Մեկ տարի անց՝ 1781 թ. տեղափոխվելով Պետերբուրգ, նա մինչև կյանքի վերջը իրեն նվիրեց այդ պատվարեր գործին։ Արզուիթյանի անմիջական օգնությամբ տպարանի նորմալ գործունեությունը ապահովելուց զատ Գ. Խալիպարյանը զբաղվում էր ստեղծագործական աշխատանքով, անգամ հրատարակության համար բառարան էր կազմում, որը, սակայն, չի կարողանում ավարտել վերահաս մահվան պատճառով։ Բառարանը Թադեոս վարդապետի լրացումներից հետո լույս տեսավ նրա հեղինակությամբ՝ «Գիրք որ կոչվի շավիղ լեզվագիտության» խորագրով։

Ռուսահայ առաջին տպարանի գործունեությունը անքակտելիորեն կապված է կոստանդնուպոլսեցի Թադեոս վարդապետ Մարությանի անվան հետ, որը զբաղվում էր և՛ մանկավարժությամբ, և՛ տպագրական գործով։ Ջեռնահաս այլ անձնավորություն չգտնվելով, Արզուիթյանի պահանջով Թադեոս վարդապետը թողնում է Ս. Խաչ վանքի վարժարանը և մեկնում Պետերբուրգ։ Այդ ժամանակվանից սկսած նա իր կյանքը անբաժանելիորեն կապում է Խալիպարյանի տպարանի հետ, ուր խմբագրում և անմիջականորեն զխավորում էր պրքերի հրատարակումը։ Առանց Թ. Մարությանի ժրաջան աշխատանքի դժվար էր պատկերացնել տպարանի նորմալ աշխատանքը։ Այդ պատճառով էլ տպարանի հետ նա Պետերբուրգից գալիս է նոր նախիջևան, իսկ հետագայում նրա հետ տեղափոխվում Աստրախան։ Պատահական չէր, որ ոուսական բանակի հետ կովկաս մեկնելուց առաջ Հովհաննես Հազարյանի խորհրդով Հ. Արզուիթյանը հստակով տպարանը հանձնում է Թադեոս վարդապետին՝ իր մահվան դեպքում տեղ ու տնօրինությունը նրան անցնելու պայմանով<sup>34</sup>։

Մանուկների ուսուցման և թարգմանական-հրատարակչական ասպարեզում արգասավոր աշխատանք էր ծավալել Մարգար Խոջենց Նրևանցին։ Նա Թ. Մարությանի հետ կրում էր հրատարակչական-տպագրական գործի ծանրությունը։ Նթե Թադեոս վարդապետը անձամբ աշխատում ու վարում էր տպագրական գործը, ապա Մարգար Նրևանցին օտար գրականությունից կատարում էր թարգմանություններ, խմբագրում ու հրատարակության պատրաստում աշխատությունները։ Նա իտալերենից հայերեն թարգմանեց հայտնի «Տելեմակի պատմության» երկու հատորները, որ տպագրվեցին Ս. Խաչի տպարանում։ Մարգար Նրևանցին ժամանակի զբաղեցրած ու գիտուն մարդկանցից էր, ազատորեն տիրապետում էր բազմաթիվ օտար լեզուների։ Նա Հազարյան ուսումնա-

1793 թ.

Ժա. Ղ. Զահկեցի, Գիրք Աղօթից որ կոչի Աստուածադերս,

Ժբ. Յովհաննես (Պետրոս) Քալանթարեան Զուղայեցի, Բժշկարան համառոտ,

Ժդ. Ֆրանչեսքոյ Ֆենելոն, Պատմութիւն Թելեմաքի որդւոյ Յուլիսի. հատ. 1.

1794 թ.

Ժդ. Խորհրդատեսւր,

Ժե. Յակոբ Նալեան, Գրքոյկս կոչեցեալ հողեշահ յերկուց ճառից սր. Յօհաննու Ոսկերերանին,

Ժզ. Պօղոս Տիրիկեցի Թորոսեան, Տևտրակ համառոտ բառարանի,

Ժէ. Սիմէոն Նրևանցի, Գիրք Աղօթից.

1795 թ.

Ժբ. Յ. Արզուիթեանց, Քարոզ,

Ժթ. Տարեցոյց եւ օրացոյց ամի տեառն 1795 եւ մերոյ թուականի ՌՄԽԻ,

ի. Ֆրանչեսքոյ Ֆենելոն, Պատմութիւն Թելեմաքի որդիոյ Յուլիսի, հատ. 2.

<sup>34</sup> Մատենադարան, ձեռ. № 2951, թ. 85ր։ Տպարանում անձամբ աշխատում, Թ. Մարությանին օգնում ու նրա հանձնարարությունները կատարում էին շապինգարահիսարցի տիրացու Հարությունը և սակավին պատանի Մկրտում Աստվածատուրյանը։ Վերջինս զբաղվում էր կապարե տառերը ձուլելու, շարելու ու ցրելու դժվարին գործով (տե՛ս Գիրք, որ կոչի ընդհանրական ներսևսի Շնորհալոյ, ՍՊԽ, 1788, էջ 335—336)։

րանը նոր նախիջականում բացելու մտադրության ջերմ կողմնակիցներից էր<sup>35</sup>։ Ցավով պետք է նշել, որ այդ շատ ուշագրավ անձնավորության կյանքն ու գործը տակավին հետադուստված չէ<sup>36</sup>։

2. Արդյունքների մի առիթով խոսելով իր կատարած չորս խոշոր գործերի մասին, նրանցից երկուսը համարում է Ս. Խաչ վանքում տպարան և դպրոց հիմնելը<sup>37</sup>։ Իսկ այն, թե ինչու էր տպարանի համար հատկապես ընտրել նոր նախիջականը և ոչ մեկ ուրիշ վայր, նա հետևակատորեն բացատրում էր այլ գաղութների բնակչության ազգային խայտառղեստ կազմով, որը կարող էր խոտվությունների ու տպարանի փակման պատճառ հանդիսանալ, «Իսկ ի նախիջական,— շարունակում էր նա,— ոչ երբեք կարէ այնպիսի ինչ յառաջանալ, ըստ որում զուտ և մաքուր հայ ազգ էն ի նմա, և ոչ գոյ հրաման այլ ազգ լինակել անդ և կամ այլակրոն ոք»<sup>38</sup>։

Մյուս, թերևս առավել կարևոր պատճառը եղել է Ս. Խաչում մեծ դպրոց բացելու ցանկությունը։ Հայ մշակույթի երախտավորը բազմիցս շնչտում էր տպարանի և դպրոցի փոխադարձ կապի ու նրանց համատեղ գոյության անհրաժեշտությունը։ Տպարանի պարտքերը վճարելու և այն նոր նախիջական տեղափոխելու համար միջոցներ հանգանակելու դժվարին օրերին Արդյունքները գրում էր. «Սու ունիմ ի մտի կամեցողութեամբ տեսան Աստուծոյ, զի ուր և զտպագրատունն հաստատեցից, անդ և զդպրատունն (որոյ ի վաղուց հետէ ես և բոլոր ազգն իմ ցանկացեալ փափակեալ) կառուցից։ Որպեսզի դպրատունն այն դմանկունս ի կատարելութիւն իմաստութեան ածմամբ յարտաքին գիտութիւնս կրթեալ՝ տպագրութեանն օգնիցէ, և տպագրատունն իրաւամբ և արդիւնաւոր արդեամբքն իւրով զմարմնաւոր պակասութիւնս՝ դպրատունն կառավարիցէ։ Այն զի ոչ դպրատունն առանց տպագրատան զհաստատութիւն կարէ ունել, և ոչ տպագրատունն առանց դպրատան զմշտնջենաւորութիւն, ապա հարկաւոր է զերկուսն ի միասին յառաջացուցանել»<sup>39</sup>։ Նա անգամ կանոններ էր մշակել, որ տպարանի պարտքերը մարելուց հետո նրանից ստացված եկամուտը տրվեր դպրոցին<sup>40</sup>։

Ավելին, տպարանի տեղափոխման օրերին Հնդկաստան հասցեագրած նամակներից մեկում 2. Արդյունքները հայտնում էր, որ միջոցներ լինելու դեպքում մտադիր է Ս. Խաչում հիմնել նաև թղթի գործարան։ «Եթէ կեանք ունիցիմ,— գրում էր նա — և հս յառաջացուցանելոց եմ բազում ազգօգուտ բարիս, միայն թէ ինչ ձևով լինիցին, թղթոյ քարխանա ևս կարող եմ շինել ի վերայ աղբրցն վանքի»<sup>41</sup>։

2. Արդյունքները շատ ուշագրավ բացատրություն է տալիս նաև այն հանգամանքին, թե ինչը հարկադրեց իրեն ձեռնամուխ լինել տպարան ստեղծելու դժվարին գործին և կրել այդքան հոգս ու շարժարանք։

Նախ՝ պայքարը պապականության դեմ։ Կաթոլիկները, օգտվելով հրատարակչական լայն հնարավորություններից, իրենց վարդապետությունն էին տարածում և թյուրիմացության մեջ գցում ժողովրդին։

Երկրորդ՝ թեև էջմիածնում և Կոստանդնուպոլսում կային տպարաններ, սակայն խաղաղ կացության բացակայության և անուանքով հաճախ խախտանվում էր նրանց աշխատանքը։

Երրորդ՝ եղած տպարանները կարգավորված և կամ նպատակային գործունեություն չունեին։ Կ. Պոլսի տպարանը որոշ աշխարհիկ մարդկանց սեփականությունն էր հանդիսանում, ուստի հանրային խնդիրներին ու առաջագիմությանը վատ էր ծառայում։ Էջմիածնի տպարանն էլ երկրի աղքատ ու ամայի վիճակի և հմուտ արհեստավորների բացակայության պատճառով պահանջված արդյունք չէր տալիս. «Ոչ տա յազուրդ սիրելի ազգին մերոյ, որպէս և փափակեն»<sup>42</sup>։

Արդարև, ռուսահայ գաղթախներում հաղթարյանի տպարանի շուրջ քսանամյա գոյությանն ու արդյունավետ աշխատանքին ծանոթանալով ակնհերև է դառնում, որ նրա գործունեությունը 2. Արդյունքները ծառայեցրել է ազգի հանրային շահերին<sup>43</sup>։

35 Մատենադարան. Լազ. արխիվ, թղթ. 104, վավ. 3։

36 Բանասեր-պատմաբան Աս. Մնացականյանը ուսումնասիրել և հրատարակության է պատրաստել Ս. Երևանցու մասին մի աշխատություն, որը կարող է լրացնել նկատվող բացը։

37 Մատենադարան, կաթ. դիվան, թ. 6, վավ. 18։

38 Նույն տեղում, թ. 7։

39 Մատենադարան. ձեռ. № 2949, թ. 112։

40 Նույն տեղում, կաթ. դիվան, թ. 6, վավ. 18, թ. 8։

41 «Դիվան Հայոց պատմության», գիրք 7, էջ 80։

42 Մատենադարան, կաթ. դիվան, թ. 6, վավ. 18, թ. 7—8։

43 հաղթարյանի տպարանի մասին տե՛ս Վ. Դ ի լ ո յ ա ն, Լեզարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից, Երևան, 1966, էջ 185—193։ Գ. Գ և Ե ր ց յ ա ն,

15 Հանգես, № 4

Խալդարյանի տպարանի խնդրին անդրադարձած ուսումնասիրողները, թե՛ անցյալում և թե՛ մեր օրերում, նշել են տպարանի արգասավոր գործունեությունը, մատնացույց անելով տպագրված բազմաքանակ գրքերը: Նրանք անտեսել են տպագրված գրքերի բովանդակությունը կամ լավագույն դեպքում միայն հարևանցի ակնարկ են արել այդ մասին, չկապակցելով այն ժամանակի հասարակական-քաղաքական հուզող երևույթների հետ: Մինչդեռ հարցի այդ կողմը առավել կարևոր ու հստականշական է, քան սոսկ տպագրված գրքերի քանակը:

Հիրավի, դժվար է պատկերացնել, որ ժամանակի տպագրական պարզունակ տեխնիկայի պայմաններում, երբ յուրաքանչյուր գրքի տպագրումը հայ մշակութային կյանքում խոշոր իրադարձություն էր, աշխատությունները հրապարակվում էին առանց խիստ ընտրության և որոշակի նպատակամղումի:

Խալդարյանի տպարանից դուրս եկած գրքերի բովանդակության և հրապարակվելիք աշխատությունների վերաբերյալ Հ. Արղուիսյանի գրադրությունների ուսումնասիրությունը բացահայտում է, թե ուսահայերի հոգևոր առաջնորդը իր հրատարակչական գործունեության ընթացքում ինչ որոշակի ձգտումներ ու նպատակներ ուներ:

Դրանցից առաջինը, ինչպես նշեցինք, արևմուտքից Վենետիկի հրատարակությունների միջոցով եկող պապականության կաթոլիկական գրավոր պրոպագանդային հակադրվելն էր: Տակավին 1782 թ. խոսելով նոր նախիջևանում տպարան հիմնելու իր մտադրության մասին, Արղուիսյանը գրում էր. «Յուսամ ի շնորհս Աստուծոյ, որ խափանեսցէ պպիղծ որչն մերոցն Վենետիկու ի ժամանակի իւրում»<sup>44</sup>: Այդ պատճառով ղեկս պետերբուրգյան տարիներին Հ. Արղուիսյանի ջանքերով տպագրվում են Ավետարան, քարոզագրքեր, աղոթագրքեր, Ն. Շնորհալու՝ հայ հոգևոր դասերի, մասամբ նաև աշխարհիկ խավերի իրավունքներն ու պարուսկանությունները սահմանող «Գիրք ընդհանրականը» և հայ եկեղեցու ծեսերին, տոներին, ժամասացությանը, նրա դավանանքի այլևայլ հարցերին վերաբերող տարրեր գրքեր: Արղուիսյանը Ն. Շնորհալու աշխատության առաջարկում հայ զանգվածների մեջ ռուսական կողմնորոշումը ամրապնդելու և նրանց կաթոլիկական քարոզների ազդեցությունից դուրս բերելու միտումով նշավակում էր կաթոլիկությունը:

Երկրորդ, Հ. Արղուիսյանը ջանում էր տպարանը ծառայեցնել ազատագրական շարժման նպատակներին: Հատուկ ընտրությամբ կատարվող հրատարակություններում նկարագրում էր Հայաստանի դրվատելի անցյալն ու սերմանում հայրենի երկիրը ազասագրելու գաղափարը: Տպագրված կամ տպագրության նախապատրաստված աշխատությունների ցանկն անգամ ինքնին շատ բան է ասում Արղուիսյանի մտադրությունների, նրա փայփայած գաղափարների մասին: Այսպես, 1787 թ. հրատարակվում է Եղիշեի «Պատմութիւն Վարդանանց» հայրենիքի ազատության ու անկախության համար պայքարի կոշող գիրքը, 1790 թ.՝ Ստեփանոս Սյունեցու (Օրբելյան) «Բան բարանական ոգեալ դիմառնարար ի դիմաց Վաղարշապատու կաթողիկէին էջմիածնի» (Ողբ և հառաչանք ի դիմաց մերոյ սրբոյ էջմիածնի) աշխատությունը, որտեղ հեղինակը, նկարագրելով իր երկրի ու ժողովրդի տարաբախտ վիճակը, զենք վերցնելու ընդունակ բոլոր մարդկանց կոչ էր անում պայքարի ելնել տիրողների դեմ: Ռուսահայ վիճակավորը հատուկ նամակով ողջունում է Մարգար Երևանցուն Շահամիր Շահամիրյանի գրքի թարգմանությունը կատարելու և տպագրելու համար: Միաժամանակ հույժ կարևոր էր համարում Դավիթ Բեկի մասին աշխատության հրատարակությունը:

Հայտնի է, որ Հ. Արղուիսյանը Հայաստանի ազատագրումը աներկ կերպով կապում էր Ռուսաստանի հետ և իր հայրենակիցների մեջ ռուսական կողմնորոշումը ամրապնդելու, Ռուսաստանի նկատմամբ համակրությունը ուժեղացնելու միտումով ձգտում էր ծանոթացնել նրանց հյուսիսային կայսրության ներկա ու անցյալ պատմության փառահեղ դրվագներին: 1786 թ. նա Գ. Խալդարյանին հայտնում էր Հարություն Դավիթյանի կողմից Պետրոս թագավորի համառոտ պատմության թարգմանության մասին և խնդրում 600 օրինակ հայերեն ու ռուսերեն և 400 միայն հայերեն տպագրել և հասցնել իրեն արտաքին երկրներ ուղարկելու համար<sup>45</sup>: 1792 թ. նա հրատարակում է «Տետրակ համառոտ անուանեալ դուռն ողորմութեան» գիրքը, որտեղ պատկերում է թուրքական բանակի դեմ Սուլթանի հաղթանակներից հետո տեղի հայերի նկատմամբ դրսևորված հոգատարությունը, կազմակերպված զաղթն ու Դրիգորիոսյու հայաբնակ քաղաքի հիմնադրումը:

Հովսեփ արք. Արղուիսյանը և հայ տպագրության գործը Ռուսաստանում 18-րդ դ. («էջմիածին», 1954, № № 9, 11, 12):

<sup>44</sup> Մատենադարան, ձեռ. № 4496, ք. 46:

<sup>45</sup> Նույն տեղում, ձեռ. № 2549, ք. 85, 93—94:

<sup>46</sup> Նույն տեղում, ք. 49:

Վերջապես, Հ. Արղուիթյանը ուժ ու եռանդ չէր խնայում տպարան ունենալու համար, որպեսզի այն ծառայեցներ լուսավորության գործին և դրանով լուծեր հիմնադրված ու հիմնադրվելիք դպրոցները դասագրքերով ասպնդովն ու դժվարին խնդիրը։ Դրանից բացի, տպարանը հույժ անհրաժեշտ էր հայկական հատվածներին, մանավանդ նորահաստատ գաղութների բնակչությանը ռուսերեն սովորեցնելու, ռուսական կուլտուրային ու պատմությանը ծանոթացնելու համար։

Տպարանը արտասահմանից Պետերբուրգ տեղափոխելու առաջին տարին՝ 1781 թ. լույս է տեսնում «Տետրակ այբբենական» ուսույցը, 1785 թ. եկեղեցական վարժարանների սաների համար տպագրվում է «Պատմութիւն սուրբ գրոց» դասագիրքը (ռուսերենից թարգմանությունը կատարել էր Հարություն Դավթյանը), որտեղ հարց ու պատասխանի միջոցով տրվում էր աշխարհի ստեղծումից մինչև քրիստոնեության առաջացման համառոտ պատմությունը։

Ազատագրական շարժման հայտնի ներկայացուցիչ Մովսես Սարաֆյանի դուստր Կլեոպատրա Սարաֆյանը հրատարակում է «Դիրք, որ կոչի բանալի գիտութեան» գործը, որը ռուսաց լեզու սովորեցնելու ձեռնարկի բնույթ ունեցող հայ-ռուսերեն բառարան էր։ Սարաֆյանի բառարանում նախ տրվում էր հայերեն բառը, ապա այդ նույնը ռուսերեն տառերով, որից հետո բերվում էր ռուսերեն համապատասխան բառը։ Հայերենը ռուսերեն տառադարձությամբ տրվում էր հայերեն կարդալ չիմացողների համար։ Նույն տարում՝ 1788 թ. Թադեոս վարդապետի աջակցությամբ հրատարակվում է Դր. Խալդարյանի կազմած հայ-ռուսերեն բառարանը։ Նոր նախիջևանում հրատարակվում է Պողոս Տեմիրկեցու «Բառարան»-ը։ Տպագրվում են նաև թարգմանություններ համաշխարհային գրականության նմուշներից («Դիրք որ կոչի վիճաբանություններ», «Պատմութիւն Թելեմաքի»), պատմա-աշխարհագրական տեղեկություններ պարունակող օրացույցներ և այլն։

Խալդարյանի տպարանի ղեկավարն ու հրատարակչական գործի կազմակերպիչը նոր նախիջևանի և Աստրախանի տարիներին, Նույնիսկ նախորդ՝ պետերբուրգյան ժամանակաշրջանում, ինչպես նշվեց, Արղուիթյանն էր։ Նա ոչ միայն կրում էր տպարանի պարտքերը մարելու ծանրությունը, հոգում տպագրվող գրքերի ծախքերը, այլև հատուկ ընտրությամբ ձեռք էր բերում հրատարակվելիք աշխատությունները ու մասնակցում դրանց խմբագրմանը։

Բերենք մեր ասածները հաստատող մի քանի փաստեր։ 1785 թ. սկզբներին տպարանը անգործ չթողնելու մտահոգությամբ Հ. Արղուիթյանը գրում էր Խալդարյանին. «Ահա ջանամ քանի ինչ ուղղել և ի միասին առաքել առ քեզ, որ երբեք պարապ չմնաս»։ 1. Ընդհանրական է։ 2. Ռդրք ի վերայ սրբոյ էջմիածնի։ 3. Բան ի վերայ երկնային զնդին թիւ և ոտանաւոր։ 4. Ներքողեան լամբրոնացոյ»<sup>47</sup>։

Մեկ տարի անց՝ 1786 թ. Ն. Շնորհալու վերոհիշյալ աշխատության հրատարակության մասին գրում էր. «Ընդհանրականն մին ես ունի մինն ի սրբոյ Աթոռոյն ստացա և մինն ի Պօլսոյ, ամենքն են կերպի իմիք սխալ։ Ես համեմատութեամբ սրբագրեցի և սրբագրեմ»<sup>48</sup>։ Ապա հայտնում էր, որ Կ. Պոլսից տիրացու Դեոդոն հրավիրել է և ուղարկում է Պետերբուրգ սխալները վերացնելու, տպագրությանը հետևելու համար։ Մեկ տարի առաջ Խալդարյանին ուղարկած նամակում նա Աստրախանում իր երկար մնալը բացատրում էր տպարանը պարապ չթողնելու համար աշխատություններ ձեռք բերելու և խմբագրելու աշխատանքներով ծանրաբեռնված լինելով<sup>49</sup>։

Պետրոս Մեծի վերաբերյալ աշխատությունը հրատարակել տալու նպատակով Արղուիթյանը 40 թուման ու մեկ մատանի էր ուղարկել Խալդարյանին և խնդրել արագացնել տպագրությունը<sup>50</sup>։

Սակայն նա դրանով չէր բավարարվում։ Ռուսահայ վիճակավորը ջանում էր հայ զանգվածների մեջ գրքի նկատմամբ սեր արթնացնել ու դրավոր խոսքի միջոցով նրանց հաղորդակից դարձնել ժամանակին հուզող հարցերին։ Այդ նպատակով նա գործադրում էր ամեն միջոց և իրեն հատուկ եռանդով կարողանում տպագրված գրքերը տարածել Ռուսաստանի և օտար երկրների հայաշատ գաղութներում, ինչպես նաև բուն Հայաստանում։

Հրատարակված գրքերը բազմաթիվ օրինակներով իրացվում էին առաջին հերթին ռուսահայ գաղութներում՝ Կովկասի, Մոլդավիայի հայաշատ զանգվածների մեջ, նոր նախիջևանում։ Աստրախանում և այլ վայրերում։ Այսպես, օրինակ, դեռևս տպարանի պետերբուրգյան տարիներին Արղուիթյանի օրագրություններում կարդում ենք. «Հարիր հատ տետրակ այբբենական առաքեցի ի Ղզլար առ մեր Ալետիս վարդապետն ծախել անդ և ծախելոց են»։ Նամակի հաջորդ տողերում նա խորհուրդ էր տալիս գինը մատչելի դարձնել, որպեսզի հրատարակվող գրքերը սպառվեն. «Ժամ-

47 Նույն տեղում, ձեռ. № 4496, թ. 271։

48 Նույն տեղում, ձեռ. № 2949, թ. 49։

49 Նույն տեղում, ձեռ. № 4496, թ. 271։

50 Նույն տեղում, ձեռ. № 2949, թ. 74։

գիրքն,— շարունակում էր Արղուիթյանը,— թեպետ աշխատանք մեծ ունի և գինն ընդ աշխատանքն չէ, սակայն պիտոյ է թեթե գնով լինել, որ շուտով ծախվի, բանդ չգայ, զօր օրինակ եթէ լինիցեր երկու ոռպլի և կամ ինչ պակաս հազար դոցանեն ևս կաշոյ էի ի մեջ թաղաթիս և զրգլարու ծախել ժողովրդեանն և վաճառականացն։ Այլ այժմ ամենայնքն փախչին ի գնոյն, որպէս և պարոն Յովհաննեսն գրելոց է՝ 51:

Ռուսաստանի սահմաններից գուրս առանձնապէս սերտ կապեր էին պահպանվում Անդրկովկասի, Պոլսի և Հնդկաստանի հայկական գաղութների հետ, ուր նույնպէս գրքեր էին առաքվում:

Խաղարկանի տպարանի գործունեությունը տեղյակ էր Ղուկաս կաթողիկոսը, և Անդրկովկասի հայաշատ վայրերում գրքերի տարածումը կատարվում էր նրա տնօրինությամբ:

1789 թ. կաթողիկոսը Հ. Արղուիթյանին գրում էր. «Ծանուցեալ էիր զմերձ ի յաւարտ ածելն տպագրութեան Հնդհանրականին. եթէ յրացեալ իցէ և յղիցես ըստ խոստմանդ, և մենք շնորհակալ լինելոց եմք»<sup>52</sup>:

Տպարանը նոր նախիջևանում գործելու առաջին տարիներին կաթողիկոսը ռուսահայ վիճակավորին նամակով հայտնում էր հետևյալը. «Յղեալ էիր ի նոր տպարանէդ ելելոց դուռն ողորմութեան, և Ծ հատ օրացոյց սոյնոյ տարւոյս, որք հասին առ մեզ ի Թիֆլիզու և բաժանեցաք համայն կարգաւորաց սրբոյ Աթոռոյս»<sup>53</sup>: Ապա խնդրում էր ժամփոք տպագրել և ուղարկել իրեն:

1786 թ. Արղուիթյանը Խաղարկանին հայտնում է. որ նրանից ստացած գրքերը, որպէս ընծա, ուղարկել է օտար երկրներում ապրող ազգակից բարեկամներին, և ապա ավելացնում. «Վասն սիրահար առնելոյ նոցա նոր տպարանիդ, որում աճենայնքն հաւանեալ են և սպասեն զնորանոր գրեանս ստանալ»<sup>54</sup>:

Մի այլ նամակով Հ. Արղուիթյանը տպարանատիրոջը հայտնում էր նրա առաքած մեկ սնդուկ գրքերի իրացման մասին: «Ես գայն սանդուղն ամբողջ առաքեցի,— գրում էր ռուսահայ թեմի առաջնորդը,— ի Ստամպոլ կէս գրեանցն տեղոյ իշխանացն ընծայեցի գրով իմոյ, իսկ կէսն գրեցի շուտով ի Բասրա: Ի հնդիկս առաքել, հասուցանել մեր տեր Ստեփանին նմանապէս ընծայել իշխանացն ի դիմաց իմոց: Երկու Մովսէս Խորենացի են ծախեալ և քանի հատ դաւանութեան տետր, մնացեալ մեր տեր Ստեփանն առեալ տարեալ է ընդ ինքեան և Հնդիկս...»<sup>55</sup>:

Հայկական գրքերի տարածման գործը կազմակերպելու համար Արղուիթյանը հարաբերություններ է մեջ էր մտել Կ. Պոլսի ռուսական դեսպան Իուլիանովի հետ: Նա գրություններից մեկում հորդորում էր Խաղարկանին արագացնելու գրքերի և առաջին հերթին «Օրացույց»-ի տպագրությունը, քանի որ դեսպան Իուլիանովը պահանջում էր շտապեցնել նրանց առաքումը<sup>56</sup>: Նոր նախիջևանից հարյուրավոր օրինակներով «Դուռն ողորմութեան», «Տարեցույց» և այլ գրքեր էին առաքվում Կ. Պոլիս, ուր Մասեհ Մասեհյանը դրանք վաճառում և դրամը ուղարկում էր Թագևոս վարդապետին<sup>57</sup>: Իզուր չէր Արղուիթյանը ամեն կերպ համոզում Խաղարկանին, որ Պետերբուրգից տպարանը նոր նախիջևան տեղափոխի, դրա նպատակահարմարությունը հիմնավորելով հայկական գաղութներին և առաջին հերթին Կ. Պոլսին մոտիկ գտնվելու հանգամանքով<sup>58</sup>:

Համանման ձևով գրքեր էին առաքվում ու իրադրվում հնդկահայ գաղութներում: Դրան նպաստում էին մասնավորապէս ազատագրական շարժման ու մշակույթի հարցերում Հ. Արղուիթյանի և Ե. Շահամիրյանի միջև ստեղծված գործարար կապերը, ինչպէս նաև լուսավորության նպատակով հնդկահայ հարուստների նոր նախիջևանի օգտին կատարած նվիրաբերությունները: Տեր Ստեփանին Հնդկաստան առաքելով, ռուսահայերի հոգևոր առաջնորդը նրա հետ ճամփել էր երեք օրինակ «Գիրք ընդհանրական» և մտադրություն ունեն ուղարկել հարյուր օրինակ Նդիշեի «Պատմություն»<sup>59</sup>:

Ռուսահայ առաջին տպարանի նախիջևանյան շրջանի գործունեությունը ավարտվում է 1796 թ.: Հ. Արղուիթյանի նախիջևանից երկար ժամանակով բացակայելը քաղաքաբար էր անդրադառնում տպարանի աշխատանքների վրա: Մանավանդ նրա դեմ Մանուկ Դերիջանյանի պետական բարձ-

<sup>51</sup> Նույն տեղում, ձևո. № 4496, թ. 282.

<sup>52</sup> «Դիվան Հայոց պատմության», գիրք Թ, էջ 92:

<sup>53</sup> Նույն տեղում, էջ 161:

<sup>54</sup> Մատենադարան, ձևո. № 2949, թ. 56:

<sup>55</sup> Նույն տեղում, թ. 43:

<sup>56</sup> Նույն տեղում, թ. 79:

<sup>57</sup> Նույն տեղում, թ. 88—95:

<sup>58</sup> Նույն տեղում, ձևո. № 4496, թ. 287, հմմտ. ձևո. № 2949, թ. 57—58:

<sup>59</sup> Նույն տեղում, ձևո. № 2949, թ. 174:

րագույն ատյաններ ներկայացրած անհիմն բողոքագրերը վշտացրել, դժգոհեցրել էին հոգևոր առաջնորդին Նոր Նախիջևանի հասարակությունից<sup>60</sup>, Դրանից էլ դառնացած Հ. Արղությանը 1796 թ. տպարանը տեղափոխում է Աստրախան:

Պետերբուրգի հայ հարուստներից իր բարեկամ ֆիլիպոս Մանուչարյանին 1796 թ. հունիսին ուղղած նամակում Արղությանը հենց այդպես էլ բացատրում էր տպարանի տեղափոխության, շատերի համար անհասկանալի ու անակնկալ, իր վարմունքը: Ստեղծված պայմաններում նա միակ խելամիտ վճիռը տպարանը իր նստավայրը՝ Աստրախան տեղափոխելու մեջ էր տեսնում: «Որ եթէ ի Հաշտարխան ոչ բերէի զտպարանն — գրում էր նա, — պարտ էի դուռն փակել և ոչինչ ի լոյս ածել»<sup>61</sup>:

Դժբախտաբար տպարանը Աստրախանում<sup>62</sup> չկարողացավ գործել նույնպիսի արդյունավետությամբ: Հինգ տարվա ընթացքում այնտեղ տպագրվեց ընդամենը վեց անուն աշխատություն: Արղությանը մահացավ կաթողիկոսական զահանխոս՝ էջմիածին մեկնելու ճանապարհին, Թբիլիսիում: Գրեթե նույն ժամանակ մահացավ նաև Թադեոս վարդապետը: Եվ 1800 թ. ղեկտեմբերին տպարանը դադարեց գործելուց:

Այսուհանդերձ տպարանը Պետերբուրգում գործելու ութ տարիների ընթացքում կարողացավ հրատարակել տասնութ<sup>63</sup>, Նոր Նախիջևանում՝ քսան, իսկ Աստրախանում՝ վեց անուն աշխատություն, այսինքն իր քսանամյա գոյության ընթացքում տպագրեց քառասունչորս գիրք, որը իր ժամանակի համար բավական պատկառելի թիվ էր:

Այսպիսով, ռուսահայ առաջին տպարանը, որը Նոր Նախիջևանի Ս. Խաչ վանք տեղափոխելուց հետո դարձավ նաև հարավային Ռուսաստանի առաջին տպարանը, նշանակալից երևույթ էր ոչ միայն XVIII դ. վերջերի հայ մշակույթի, այլև բովանդակ Նովոռոսիայի տպագրական-հրատարակչական և առհասարակ կուլտուր-լուսավորական գործի պատմության մեջ: Հովսեփ Արղությանը տպագրական-հրատարակչական իր անխոնջ գործունեությամբ նպաստում էր հայ և ռուս ժողովուրդների պատմության ու կուլտուրայի փոխադարձ ճանաչման և Ռուսաստանի, ինչպես նաև այլ երկրների հայ զանգվածների լուսավորության ու ազատագրական շարժման խնդիրներին:

60 Նույն տեղում, ձեռ. № 2951, թ. 86ա:

61 Նույն տեղում, թ. 110:

62 Տպարանի գործունեության աստրախանյան տարիների մասին տե՛ս Վ. Խաչատրյան, Տասնութերորդ դարի Աստրախանի հայերի մշակութային կյանքի պատմությունից («Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 2, էջ 303—305):

63 Ե. Շահազիզը սխալվում է նաև պետերբուրգյան տարիներին տպագրված գրքերի թվի հարցում, նշելով ընդամենը սասններկու անուն աշխատություն (տե՛ս Նոր Նախիջևանի Ս. Խաչ վանքը, էջ 48):